<<ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ>> ՍՊԸ
ՀՀ ՎԶՄ, ք. Վայք, Երկրաբանների փող. 7
E-mail: ecobuilding86@mail.ru, ecobuilding17@gmail.com
Հեռ. +/374/93-83-88-22

N - 1 /24

29. 02. 2024 թ.

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան
համայնքի ղեկավար
պարոն Կ. Եղիազարյանին

Հարգելի պարոն Եղիազարյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով <<ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ>> ՍՊԸ-ն նախատեսում է ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենուտ բնակավայրի վարչական տարածքում իրականացնել ՀՀ Արագածոտնի մարզ, Ապարան համայնքի Վարդենուտ բնակավայրում 144 տեղ/հզորությամբ կրթահամալիրի կառուցման աշխատանքներ:

-Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ապարան համայնքի գյուղ Վարդենուտ 9-րդ փողոց 14 դպրոց

-Հողամասի մակերեսը՝ 2,112հա,

-Անշարժ գույքի վկայականի համար՝22032021-02-0038

Տարածքում առկա են շինություններ, որոնք հետագայում ենթակա են քանդման՝ դպրոց 2462,13քմ և էլ. Ենթակայան 13,33քմ:

Խնդրում եմ Ձեր լիազորությունների և իրավասությունների շրջանակում ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենուտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով /ծանուցումը ստանալուց հետո ոչ շուտ 21 աշխատանքային օրվա և ոչ ուշ քան 25 աշխատանքային օրվա ընթացքում/ կազմակերպել և իրականացնել հանրային քննարկումներ՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ապարան

համայնքի Վարդենուտ բնակավայրում 144 տեղ/հզորությամբ կրթահամալիրի կառուցման աշխատանքների

շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում եմ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ /խմբագրված 2023թ/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգի /խմբ. 28.12.2023թ թիվ 2343-Ն որոշում/ հանրային քննարկումների իրականացումից հետո ընկերությանը տրամադրել արձանագրություն, մասնակիցների ցանկ, տեսաձայնագրություն կամ նկարներ և նախնական համաձայնություն՝ ավագանու որոշմամբ, կրթահամալիրի կառուցման աշխատանքներ վերաբերյալ:

Հանրային քննարկումների օրի, վայրի և ժամի վերաբերյալ խնդրում եմ լրացուցիչ տեղեկացնել ընկերությանը:

Խնդրում եմ վերը նշված Օրենքի և ՀՀ կառավարության որոշման դրույթների համաձայն ապահովել նաև շահագրգիռ հանրության մասնակցությունը:

Կից ներկայացվում է նաև գլխավոր հատակագիծը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ տնօրեն Կ. Մինասյան